

ծախսերը և պահպանել բնապահպան կազմակերպությունների կողմից սահմանված արտամետոմենտների ծավալը:

4. Գրավավերադարձման մեխանիզմը ենթադրում է գրավային վճարի (դեպոզիտի) կատարում որոշակի ապրանքի ձեռքբերման ժամանակ (օրինակ, զարեջրի ձեռքբերման ժամանակ գրավը կատարվում է ապակյա տարայի համար, որի արժեքը ներառված է զարեջրի գնի մեջ): Գրավային գումարը փոխհատուցվում է մաս-մաս կամ ամբողջությամբ օգտագործված ապրանքի վերադարձման ժամանակ: Այս մեխանիզմը լայնորեն կիրառվում է տարբեր խմիչքների փաթեթավորման և վաճառքի ժամանակ:

Բնապահպանական քաղաքականության իրականացման մեթոդներից են բնապահպանական կառույցների և տնտեսավարող սուբյեկտների միջև կնքվող կամավոր համաձայնությունները, որոնք ներկայումս լայն տարածում են ստացել Արևմտյան Եվրոպայի երկրներում և ԱՄՆ-ում: Պետք է նշել, որ «բնապահպանական կամավոր համաձայնություն» հասկացության ընդհանուր սահմանում գոյություն չունի: Սակայն խոսքը գնում է տնտեսավարող սուբյեկտների կողմից կամավոր կերպով ընդունվող պարտավորությունների մասին, որոնք ընդլայնում են գոյություն ունեցող էկոլոգիական պահանջները: Պարտավորությունների ավելացումը դրականորեն է անդրադառնում սուբյեկտի համբավի վրա և խթանում ընդհանուր ինովացիոն քաղաքականության զարգացմանը: Այն ձեռնարկությունները, որոնք ստանձնում են լրացուցիչ պարտավորություններ, հնարավորություն են ստանում նախապես պատրաստվելու առավել խիստ ստանդարտների պահանջների բավարարմանը: Մյուս կողմից, նման նախաձեռնությունը պետական բնապահպանական կառույցներին հնարավորություն է տալիս խոսափել առավել խիստ մորմատիվների սահմանումից, խնայելով դրանց մշակման, ներդրման և վերահսկողության ուղղությամբ կատարվելիք ծախսերը:

ՏԱՏՅԱՆԱ ՕՐԱՆՅԱՆ

*ՀՀ ԳԱՄ Մ. Զոքանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տ.գ.թ.*

ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԱՆՅԱՎԱՍԱՐԱԶԱԾ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Տարածաշրջանային միավորների զարգացման մակարդակների անհամաչափության մեղմացմանն ուղղված համալիր միջոցառումների մշակման և իրականացման գործում մեծ կարևորություն ունի տարածքային միավորների զարգացման գնահատումը: Այսպիսի գնահատումների անհրաժեշտությունը զգացվում է սահմանափակ ռեսուրսների նպատակային ու արդյունավետ բաշխումն ապահովելու գործընթացում: Տարածաշրջանային միավորների հավասարաչափ զարգացումը կախված է սեփական միջոցների ծավալից և բյուջետային ֆինանսավորումից:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ 2002-2007թթ. արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ մարզերի ավելացել է 1.9 անգամ, ընդ որում արտադրանքի աճի ամենաբարձր տեմպերը գրանցվել են Սյունիքի մարզում՝ 4.1 անգամ և Լոռու մարզում՝ 2.8 անգամ, իսկ ամենացածրը՝ Արմավիրի ու Շիրակի մարզերում:

Այդուսակ 1-ում, որտեղ ներկայացված են արդյունաբերական արտադրանքի աճի տեմպերն ըստ ճյուղերի 2007թ., այն 2006թ. նկատմամբ, որտեղից երևում է, որ հանքագործական արդյունաբերությունում ամենաբարձր ցուցանիշներն ունեն Սյունիքի և Լոռու մարզերը: Նրանց

աճի տեմպերը 2007թ., դրանք 2006թ. նկատմամբ կազմել են 105.2% և 81.7% համապատասխանաբար: Մակայն հանքագործական ճյուղում ցածր է Վայոց Ձորի տեսակարար կշիռը: Արմավիրի մարզում այս ճյուղն ընդհանրապես չի զարգացել: Ինչ վերաբերվում է մշակող արդյունաբերությանը, ապա այստեղ ամենաբարձր մակարդակի են հասել Կոտայքի, Շիրակի, Արագածոտնի և Արմավիրի մարզերը, որոնց աճի տեմպերը 2006թ. նկատմամբ 2007թ. կազմել են համապատասխանաբար 69.1% և 111.4%:

Աղյուսակ 1

ՀՀ մարզերի արդյունաբերական արտադրանքի
ծավալի աճի տեմպերն ըստ ճյուղերի

(%)

	Անբողջ արդյունա- բերություն	Հանքագործական արդյունաբերություն	Մշակող արդյունա- բերություն	Սննդամթերքի արդյունաբերություն	Քիմիական արդյունաբերություն	Մետաղագործական արդյունաբերություն	Մեքենաների և սար- քավորումների արդ- յունաբերություն	Էլեկտրաէներգիայի, ջրի, գազի արտադրություն
	2007/2006	2007/2006	2007/2006	2007/2006	2007/2006	2007/2006	2007/2006	2007/2006
Արագածոտն	122.9	92.3	124.9	114.8	83.3	80.7	104.2	117.2
Արարատ	97.6	182.6	95.1	94.5	106.5	17.4	-	111.5
Արմավիր	105.8	-	109.3	102.8	-	6.5 անգամ	28.9	103.7
Գեղարքունիք	74.0	10.7	94.4	92.6	-	9.5 անգամ	64.3	106.7
Լոռի	92.6	81.7	89.2	100.8	223.1	79.5	130.7	126.6
Կոտայք	76.0	220.6	69.1	108.2	99.9	118.7	59.5	102.8
Շիրակ	113.8	160.5	11.4	100.0	-	224.4	262.3	114.7
Սյունիք	105.4	105.2	115.2	100.1	-	230.7	130.1	102.1
Վայոց Ձոր	105.7	146.3	107.4	108.3	-	151.2	-	99.6
Տավուշ	104.6	121.8	97.8	98.4	-	-	-	119.5

Ինչպես երևում է աղյուսակից, քիմիական արդյունաբերությունը չի զարգացել Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում, իսկ մեքենաների և սարքավորումների արդյունաբերությունը՝ Արարատի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում:

Մարզերի անհավասարաչափ զարգացումը նկատվում է նաև դրանց սպառողական ապրանքների արտադրության ծավալի աճի տեմպերով, որը 2002-2006թթ. կազմել է 154.5%, ընդ որում ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Արագածոտնի և Արմավիրի մարզերում՝ 222.7% և 204.7%, իսկ ամենացածրը՝ Լոռու մարզում՝ 97.4%:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ մարզերի հավասարաչափ զարգացումը կախված է նրանից, թե մարզերում ինչ տեսակարար կշիռ է կազմում հանքագործական և մշակող արդյունաբերությունները: Աղյուսակ 2-ում բերված են արդյունաբերական արտադրանքի կառուցվածքի կշիռի ցուցանիշները:

Աղյուսակից երևում է, որ հանքագործական արդյունաբերությունում ամենաբարձր ցուցանիշները նկատվում են Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում: Այդ մարզերը կարող են հատկացնել հանքանյութային ռեսուրսներ մյուս մարզերի զարգացման համար: Մշակող արդյունաբերությունում բարձր ցուցանիշներ ունեն Արարատի և Լոռու մարզերը:

Այսպիսով՝ վերլուծությունները ցույց տվեցին, որ մարզերի դինամիկ զարգացման համար մեծ նշանակություն ունեն դրանց զարգացման ուղղությունների հիմնավորումը, նոր ռեսուրսների ստեղծումը և նրանց համաչափ բաժանումը:

**Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն
ըստ արտադրության բաժինների**

(%)

	Հանքագործական արդյունաբերություն		Մշակող արդյունաբերություն		Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությունը ու բաշխումը	
	2007	2006	2007	2006	2007	2006
Հայաստանի Հանրապետություն	15.9	17.6	66.7	65.0	17.4	17.4
Ք.Երևան	0.7	0.8	86.0	87.0	13.3	12.2
Արագածոտն	2.4	3.6	79.2	75.9	18.4	20.5
Արարատ	1.7	0.9	86.7	87.3	11.6	11.8
Արմավիր	-	-	38.1	34.3	61.9	65.7
Գեղարքունիք	4.0	27.6	62.1	49.9	33.9	22.5
Լոռի	2.2	2.9	84.4	87.7	13.4	9.4
Կոտայք	2.9	1.6	63.0	58.8	34.1	39.6
Շիրակ	4.6	3.5	71.7	73.7	23.7	22.8
Սյունիք	85.7	85.8	5.3	4.2	9.0	10.0
Վայոց Ձոր	0.7	0.5	76.9	77.3	22.4	22.0
Տավուշ	4.8	4.8	65.6	68.2	29.6	27.0

Սակայն դեռևս չեն մշակված մարզերի փոխառու ֆինանսական միջոցների բաշխման մեխանիզմները: Չնայած նրան, որ բոլոր մարզերը ստանում են դոտացիա, ապա հիմնավորված չեն մարզերի ֆինանսավորման ուղղություններն ու չափանիշները, ինչպես նաև մարզերի տնտեսական աճի նախադրյալները:

Վերջին տարիներին ՀՀ արդյունաբերությունում գրանցվել է տնտեսական աճ, սակայն առկա են բազմաթիվ սահմանափակումներ, որոնք կապված են արտադրական ենթակառուցվածքների կատարելագործման կարողությունների արդյունավետ օգտագործման, ինչպես նաև տնտեսական հարաբերությունների կարգավորման մեխանիզմների մշակման հետ:

Արդյունաբերության համակարգի, այդ թվում՝ հանքագործական և մշակող արդյունաբերություններում տարածքների ներդրումային գործընթացների զարգացման փոխկապակցվածությունը կնպաստի դրանց տարածքային զարգացման հիմնախնդիրների լուծմանը: Այս իրավիճակում կարգավորիչ դեր կարող է կատարել պետության կողմից մարզերի արդյունաբերության ոլորտի սուբսիդավորումը, որն ուղղված կլինի ճյուղի գերակա ուղղությունների և ոլորտի արտադրական ենթակառուցվածքների զարգացման խթանմանը: Այստեղ խնդիրը կայանում է հիմնավորված սուբսիդավորման անհրաժեշտությանը, ուղղություններին և դրանցից ակնկալվող արդյունքներին:

Սուբսիդավորման գործընթացի իրականացումը պահանջում է գործուն մեխանիզմների կիրառում, քանի որ այն առնչվում է մարզերի արդյունաբերական կազմակերպությունների և արդյունաբերությամբ զբաղվող սուբյեկտների հետ, որոնք ունեն տարբեր մասնագիտացումներ և արտադրում են բազմազան արդյունաբերական արտադրանք:

Հաշվի առնելով արդյունաբերական արտադրանքների շուկայական պահանջարկը, անհրաժեշտ հումքային բազայի առկայության դեպքում կարելի է ճիշտ հիմնավորել վերամշակող տնտեսական գործունեության ուղղվածությունը, որը ենթադրում է՝

- ներքին շուկայում տեղական արտադրանքի ապահովումը,
- տեղական հումքանյութային ռեսուրսների օպտիմալ բաշխումը և օգտագործումը,
- տարածաշրջանների միջև գոյություն ունեցող անհամաչափությունների հաղթահարումը և տնտեսավորման համագործակցության զարգացումը:

ՀՀ տարածքային միավորների տնտեսական զարգացման մակարդակի միջև առաջացած անհամաչափությունների հաղթահարման համար անհրաժեշտ է պետական աջակցությունը՝ թույլ զարգացած տարածաշրջանների համար տեխնիկական, տեխնոլոգիական և ֆինանսական միջոցների և ծառայությունների ապահովումը:

Նշված խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է մշակել և իրագործել ՀՀ մարզերի արդյունաբերության սոցիալ-տնտեսական զարգացման նպատակային համալիր ծրագիրը:

ՀՀ մարզերի արդյունաբերության զարգացման հիմնախնդիրները բացահայտելու համար դիտարկենք արդյունաբերական արտադրանքը բնութագրող մի քանի ցուցանիշներ:

Աղյուսակ 3

Արդյունաբերական արտադրանքը բնութագրող ցուցանիշները

	2006	2007
Ֆինանսական արդյունքները		
Արտ., ապր., աշխ., ծառ.-ի իրացումից հասույթ	340544.9	369504.2
Իրացված արտ., ապր., աշխ., ծառ.-ի ինքնարժեք	293242.3	326705.1
Համախառն շահույթ, վնաս	47302.6	42799.1
Իրացման ծախսեր	9258.2	7756.9
Վարչական ծախսեր	44998.3	27906
Արտ., ապր., աշխ., ծառ.-ի իրացումից ստացած շահույթ, վնաս	-6953.9	7136.2
Գործառնական այլ եկամուտներ, ծախսեր	-2925.8	25651.8
Ֆինանսական ծախսեր	5628.4	7661.2
Բաժնեմասն. մեթոդով հաշվարկվող ներդր. գծով շահույթ, վնաս	2876.2	-10453
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքից և պարտավորությունների մարումից շահույթ, վնաս	2.7	-56.5
Այլ ոչ գործառնական շահույթ, վնաս	7358.5	-87547.8
Սովորական գործունեությունից շահույթ, վնաս		-72930.6
Արտասովոր դեպքերից շահույթ, վնաս	67.6	38.7
Զուտ շահույթ	-5203.1	-72891.9
Ֆինանսական կայունության ցուցանիշներ		
Ընթացիկ իրացվելիության գործակից (%)	105.9	114.6
Սեփական շրջանառու միջոցների ապահովության գործակից (%)	37.6	38.8
Ինքնավարության գործակից (%)	44.1	41.3
Արտադրանքի շահութաբերությունը	-2.3	2.1
Ակտիվների շահութաբերությունը	-	-9.9
Այլ ցուցանիշներ		
Արդյունաբերության արտադրանքի ֆիզիկական ծախսի ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ	114.6	115.1

Ելնելով աղյուսակ 3-ի տվյալներից վերլուծենք մի շարք ցուցանիշներ:

Արտադրանքի շահութաբերության գործակիցը, որը ցույց է տալիս թե որքան շահույթ է ստացված արտադրանքի արտադրության և իրացման վրա կատարված միավոր ծախսի դիմաց: 2006թ. այն կազմել է 2.1 նախորդ տարվա -2.3-ի փոխարեն: Նման դրական արդյունքը հիմնականում կապված է վարչական ծախսերի մոտ 37% կրճատման հետ:

Արտադրանքի արտադրության տակ գտնվող միջոցների արդյունավետ օգտագործումը բնութագրվում է ակտիվների շահութաբերության գործակցով, որը հավասար է զուտ շահույթի և ակտիվների միջին գումարային արժեքի հարաբերությանը: Վերջինս 2007թ. եղել է -9.9, իսկ

2006թ.՝ 9.9: Սա վկայում է այն մասին, որ ՀՀ արդյունաբերության արտադրանքի դրամական միջոցների կառավարման մակարդակը ցածր է:

Ջուտ մարժայի գործակիցը 2007թ. կազմել է -19.7, 2006թ.՝ -1.5 (գուտ շահույթի և համախառն հասույթի հարաբերության): Այսինքն՝ ՀՀ արդյունաբերությունը գրեթե չեն արտադրում մրցանակ նոր արտադրանք, արտադրական գործընթացում բացակայում են ժամանակակից տեխնոլոգիաներ: Ջուտ մարժայի գործակցի ցածր, բացասական արդյունքը կարող է նաև բարձր հարկային դրույքաչափերի հետևանք լինել:

Ընթացիկ իրացվելիության գործակիցը բնութագրում է արտադրանքի արտադրության շրջանառու միջոցներով կարճաժամկետ պարտավորությունների ծածկման մակարդակը: Այս գործակիցը ցույց է տալիս, թե ապրանքների արտադրությունը որքանով է ապահովված շրջանառու միջոցներով՝ տնտեսության գործունեության և կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի մարման համար: Գործակիցը որոշվում է որպես ընթացիկ ակտիվների և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերություն:

Այս ցուցանիշը հանդիսանում է որպես նորմավորող ցուցանիշ և միջազգային պրակտիկայում նորմալ է համարվում, երբ գործակիցն ընդունում է 2 և ավելի արժեք: 2007թ. այն 2006թ. համեմատ աճել է 8.7%-ով և կազմել 115.1, որը համարվում է ցածր ցուցանիշ:

Սեփական շրջանառու միջոցներով ապահովության գործակիցը բնութագրում է սեփական շրջանառու միջոցների առկայությունն արտադրանքում ֆինանսական կայունություն ապահովելու համար: Գործակիցը որոշվում է իբրև սեփական միջոցների աղբյուրների ծավալի և հիմնական միջոցների արժեքի և այլ արտաշրջանառու ակտիվների տարբերության հարաբերությունն արդյունաբերական արտադրանքում առկա շրջանառու միջոցների փաստացի արժեքին: Ցուցանիշը պատկանում է նորմավորող գործակիցների դասին, և սեփական շրջանառու միջոցները կհամարվեն անբավարար, եթե գործակիցը ընդունի 10-ից փոքր արժեք: Մեզ մոտ այն 38,8 է, որը բավականին բարձր ցուցանիշ է:

Սեփական միջոցների բաժինն արդյունաբերական արտադրանքի պասիվների մեջ բնութագրվում է ինքնավարության գործակցով: Ընդհանուր առմամբ ֆինանսական կայունությունը պահպանման համար պասիվների մեջ սեփական միջոցների բաժինը պետք է գերազանցի փոխառու միջոցներին: Գործակցի բարձր արժեքն արտացոլում է ցածր ֆինանսական ռիսկ և լավ հնարավորություն է ստեղծում ավելի շատ փոխառու միջոցների ներգրավման համար: Այս գործակիցը մույնպես պատկանում է նորմավորող գործակիցների դասին: Տեսականորեն այս գործակցի նորմալ մեծությունը պետք է մեծ կամ հավասար լինի 50%-ից: Ինչպես տեսնում ենք 2006թ. և 2007թ. ցուցանիշները նորմայից ցածր են. փոխառու միջոցները մոտ 2.5 անգամ գերազանցում են սեփական միջոցներին: Սա նշանակում է, որ արդյունաբերության ոլորտի արտադրանքը բավականին զգայուն են տոկոսադրույքի տատանումների, տնտեսության կտրուկ աճի և անկման նկատմամբ, որն էլ չի կարող գրավական լինել ներդրողների համար:

Այսպիսով՝ ՀՀ արդյունաբերության մեջ առկա են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ոչ հեռանկարային հատվածի զարգացման գերակայություն, դրամական միջոցների կառավարման ցածր մակարդակ, ֆինանսական ռիսկայնության բարձր աստիճան, նոր և մրցունակ արտադրանքի թողարկման փոքր ծավալներ, ժամանակակից տեխնոլոգիաների առկայություն: Այս բոլորը շտկելու գործում մեծ դեր կարող են կատարել ներդրումները և այնպիսի մեխանիզմների մշակումը, որոնք կշահագործեն արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ավելի արդյունավետ տնօրինել դրամական միջոցները, ինչը կրերի ֆինանսական կայունության: Այդ ներդրումների միջոցով արտադրանքը կզինվի նոր սարքավորումներով, որը թույլ կտա արտադրել նոր տեսակի, միջազգային ստանդարտներին համապատասխան, մրցունակ, հետևաբար արտերկրի շուկաներում պահանջարկ ունեցող արտադրանք: